Հաստատվում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Գ. Մակիչյան
«25» նոյեմբերի 2014

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի 2014 թվականի
նոյեմբերի «19»-ի որոշմամբ (արձ. №10)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Հյուսիսային համալսարանի գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) Հյուսիսային համալսարանի (այսուհետև՝ Համալսարան) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ ՀՀ) օրենսդրությանը համապատասխան և համալսարանի կանոնադրության հիման վրա՝ ձևավորվելով համալսարանի ռեկտորի 2014թ. օգոստոսի 28-ի հրամանով:

1.2 Կենտրոնը կարող է փոփոխել իր կարգավիճակը կամ դադարեցնել գործունեությունը Համալսարանի գիտխորհրդի անդամների 2/3-ի առաջարկությամբ՝ ռեկտորի հրամանով:

1.3 Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել Կենտրոնի անդամների առնվազն 1/2-ի առաջարկությամբ՝ ռեկտորի հրամանով:

II. Կենտրոնի առաքելությունը

2.1 Կենտրոնն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է՝ ելնելով արդի գիտության առջև ծառացած հիմնախնդիրներից ու գերակայություններից, կրթական բարեփոխումների իրականացման, հետբուհական մասնագիտական կրթության զարգացման ներկա փուլի պահանջներից:

Կենտրոնի առաքելությունն է՝

2.2.1 կյանքի, պրակտիկայի պահանջներին համահունչ և ապագայի հեռանկարներին միտված գիտական հետազոտությունների իրականացումը, գիտության ու արտադրության միջև գործնական ու սերտ կապի հաստատումը, հետազոտությունների՝ անմիջական արտադրողական ուժի վերածումը, դրանց արդյունքների ներդրումը արտադրության մեջ, երկրի տնտեսության ու մշակույթի զարգացման սատարումը,

2.2.2 Համալսարանում գիտության համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական ներուժի առավել լրիվ բացահայտումն ու դրա արդյունավետ օգտագործումը, մերձավոր հեռանկարում համալսարանը ճանաչված գիտահետազոտական կենտրոն դարձնելը,

2.2.3 դինամիկորեն փոփոխվող սոցիալ-տնտեսական միջավայրի և ձևավորվող տեղեկատվական՝ հասարակության պայմանների հաշվառմամբ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, ազգային տնտեսությանը և երկրի հոգևոր առաջընթացին ակտիվորեն ծառայելու ընդունակ բարձր որակավորմամբ ժամանակակից կադրերի պատրաստումը,

2.2.4 ուսումնական գործընթացի և գիտական հետազոտությունների միջև կապի սերտացումը, դրանց խոր ինտեգրումն ու միասնության հաստատումը:

III. Կենտրոնի նպատակը

3.1 Կենտրոնի նպատակը՝

3.1.1 գիտական աշխատանքի՝ որպես Համալսարանի գործունեության կարևոր բաղադրիչի դերի ուժեղացումն է, համալսարանում իրականացվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների ակտիվացումը, դրանց որակի ու արդյունավետության բարձրացումը,

3.1.2 Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և ուսանողների գիտաստեղծագործական ներուժի առավել լրիվ բացահայտումը, դրա ռացիոնալ ու նպատակամետ օգտագործումը, համալսարանում իրականացվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներում այդ ներուժի ակտիվ ներգրավումը,

3.1.3 Համալսարանի կառավարման տարբեր օղակների ու ստորաբաժանումների՝ դեպարտամենտների (ֆակուլտետների) դեկանատների ու դրանց խորհուրդների, ամբիոնների, որակի ապահովման և ուսումնական վարչությունների, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, ուսխորհրդի, ուսանողական գիտական ընկերության, համալսարանական մյուս օղակների առավել ակտիվ ներգրավումը բուհում գիտական աշխատանքների կազմակերպման ու իրականացման մեջ,

3.1.4 Համալսարանում իրականացվող գիտական ուսումնասիրությունների պրոբլեմատիկայի հստակեցումն ու կոնկրետացումը, կատարվող հետազոտությունների խորացումը, դրանց ինչպես գիտատեսական, այնպես էլ պրակտիկ ուղղվածության ուժեղացումը,

3.1.5 կատարվող հետազոտությունների բարձր ելքային արդյունքների ապահովումը, այդ արդյունքների ռացիոնալ օգտագործումը,

3.1.6 գիտահետազոտական, գիտամեթոդական և կրթական ծրագրերի միջև փոխկապակցվածության ապահովումը, կատարվող հետազոտությունների պրակտիկ արդյունքների ներդրումն ուսումնական գործընթացում,

3.1.7 մերձավոր հեռանկարում համալսարանը գիտահետազոտական աշխատանքների կենտրոն դարձնելու համար անհրաժեշտ հիմքերի ու նախադրյալների ստեղծումը.

3.2.0 ներկա իրողությունների և ապագայի հեռանկարների հաշվառմամբ Կենտրոնն այնպիսի կառույց դարձնելն է, որը՝

3.2.1 հարմարունակ է միաջավայրի փոփոխություններին, արագ և համարժեք է արձագանքում հասարակության ու տնտեսության փոփոխվող կարիքներին, աշխատուժի շուկայի պահանջներին,

3.2.2 էական դերակատարում ունի համալսարանական և միջհամալսարանական նորարարական ծրագրերում,

3.2.3 հետազոտողներ է պատրաստում լիարժեք կարիերայի, մասնագիտական առաջընթացի, մասնավորապես թռի մենեջմենթի համար,

3.2.4 ապահովում է առաջնակարգ կրթություն և գիտահետազոտական գործունեություն՝ տեսության և պրակտիկայի համակցման, հետազոտողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի արդյունավետ համագործակցության միջոցով,

3.2.5 նախաձեռնող է արտաքին գործարար միջավայրի հետ իր փոխհարաբերություններում, ունակ՝ ապահովելու ֆինանսական կայունություն և սոցիալական երաշխիքներ բոլոր մասնակիցների համար,

3.2.6 առաջնորդվում է գլոբալ հեռանկարով՝ ուղենիշ ունենալով իր գիտակրթական համակարգի միջազգայանացումն ու միջազգային ինտեգրումը,

3.2.7 կարող է հաջողությամբ իրականացնել գիտահետազոտական և մասնագիտական կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրեր՝ ազգային տնտեսության և հասարակության հոգևոր կարիքներին համահունչ,

3.2.8 ունակ է պատրաստել կյանքի, կարիերայի, հարատև ուսումնառությանն ու մասնագիտական առաջընթացի պահանջներին համապատասխանող հետազոտողներ՝ հաշվի առնելով նաև փոփոխվող սոցիալ-տնտեսական միջավայրի, հոգևոր ոլորտի և ձևավորվող գլոբալ տեղեկատվական հասարակության պայմանները,

3.2.9 ի վիճակի է ստեղծել նպաստավոր միջավայր գիտության ոլորտում համալսարանի համակողմանի ու ներդաշնակ զարգացման, մերձավոր հեռանկարում համալսարանը արդի գիտահետազոտական կենտրոն դարձնելու համար:

IV. Կենտրոնի խնդիրները

4.1.0 Կենտրոնի խնդիրներն են՝

4.1.1 Համալսարանի գիտահետազոտական գործունեության ակտիվացումը, այդ գործունեության նպատակամետ կառավարման ապահովումը, գիտական հետազոտությունների որակի և արդյունավետության բարձրացումը,

4.1.2 Համալսարանի գիտահետազոտական ու գիտամեթոդական գործունեության ընթացիկ (տարեկան) ու հեռանկարային ծրագրերի մշակումը, քննարկումն ու սահմանված կարգով հաստատումը, դրանց պրակտիկ իրականացման կազմակերպումը,

4.1.3 Համալսարանի ամբիոնների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության ուղղորդումն ու համակարգումը,

4.1.4 ամբիոնների գիտահետազոտական աշխատանքի կոորդինացումը, նրանց գիտաստեղծագործական համագործակցության ուժեղացումը, միջդիսցիպլինար կապերի սերտացումը, գիտական կարևոր պրոբլեմների՝ համատեղ հետազոտությունների կազմակերպումը, միջառարկայական հետազոտությունների ձեռնարկումն ու իրականացումը,

4.1.5 ուսումնական ու գիտահետազոտական ախատանքների մերձեցումն ու միահյուսումը,

4.1.6 գիտահետազոտական աշխատանքի որակի արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտումն ու օգտագործումը,

4.1.7 գիտական հետազոտությունների գործնական ուղղվածության ուժեղացումը, կյանքի, պրակտիկայի հետ կապի ամրապնդումը, «բուհ-աշխատաշուկա» համագործակցության սերտացումը, կատարվող հետազոտությունների արդյունքների առևտրայնացումն ու վաճառահանումը, համալսարանում գիտության ինքնաֆինանսավորման սկզբունքի ներդնումը,

4.1.8 գիտահետազոտական գործունեության սոցիալ-տնտեսական արդյունավետության բարձրացումը,

4.1.9 «աշխատաշուկա-բուհ» համագործակցության սերտացման, գիտական մշակումների առևտրայնացման և Համալսարանի գիտահետազոտական գործունեության ֆինանսական կայունության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

4.1.10 նորարական ծրագրեի մշակումն ու իրականացումը,

4.1.11 գրանտային ծրագրերի ձեռքբերումն ու հետազոտությունների կազմակերպումը,

4.1.12 արտերկրի բուհերի, գիտահետազոտական կենտրոնների ու մյուս կազմակերպությունների իր գործընկերների հետ գիտական համագործակցության հաստատումն ու խորացումը,

4.1.13 Համալսարանում միջազգային, հանրապետական ու ներհամալսարանական գիտաժողովների, սիմպոզիումների, կլոր սեղանների, գիտության ու պրակտիկայի առավել կարևոր ու հրատապ պրոբլեմներին նվիրված ստեղծագործական քննարկումների կազմակերպումը, դրանցում համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և ուսանողների ակտիվ մասնակցության ապահովումը.

4.2.1 հետբուհական մասնագիտական կրթության օրինակելի իրականացումը, կրթական ծրագրերի բարելավումն ու կատարելագործումը, կրթության բովանդակության արդիականացումն ու հարստացումը, մատուցվող կրթական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը,

4.2.2 հետբուհական մասնագիտական կրթության ասպարեզում միջազգային ու ներազգային բուհական կապերի սերտացումն ու համագործակցության զարգացումը.

4.3.1 Համալսարանի ուսանողական գիտական ընկերությանը անհրաժեշտ օգնության ապահովումը,

4.3.2 ուսանողների գիտաստեղծագործական ներուժի բացահայտումը, դրա արդյունավետ օգտագործումը, ուսանողության ակտիվության ու նախաձեռնությունների սատարումը, իրականացվող հետազոտություններում ուսանողների ու ասպիրանտների լայն ներգրավումը, երիտասարդ հետազոտողների շարժունության ապահովումը,

4.4.1 Համալսարանի հրատարակչական աշխատանքների կազմակերպումն ու ուղղորդումը, արժեքավոր հետազոտությունների, մենագրությունների, կոլեկտիվ ուսումնասիրությունների, գիտական աշխատանքների ժողովածուների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, պայմանագրային աշխատանքների, «Օգնություն ուսանողին» խորագրով ուսումնական նյութերի, դասախոսությունների տեքստերի և ուսումնամեթոդական այլ նյութերի հրապարակումը:

V. Կենտրոնի գործառույթները

5.Կենտրոնի գործառույթներն են՝

5.1 հետբուհական կրթական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, համապատասխան տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը համալսարանի շահագրգիռ ստորաբաժանումներին,

5.2 գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացի, այդ թվում՝ ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, կադրային ապահովվածության արդյունավետության գնահատումը, մշտադիտարկումը, համապատասխան առաջարկությունների ներկայացումը,

5.3 հետբուհական կրթական ծրագրերի թարմացումն ու արդիականացումը,

5.4 համալսարանում հետբուհական կրթական ծրագրերի մշակման և հաստատման աշխատանքների կազմակերպումը,

5.5. գիտահետազոտական աշխատանքների քաղաքականության մշակումը,

5.6 հետբուհական կրթական ծրագրերի շաղկապումը գործարար նախագծերի հետ,

5.7 գիտահետազոտական գործունեության արդյունավետության չափանիշների կիրառումը,

5.8 որակի արտաքին գնահատում իրականացնող կառույցների հետ համագործակցության իրականացումը,

5.9. հետբուհական կրթության միջազգային փորձի ուսումնասիրությունը, համապատասխան մեխանիզմների տեղայնացման ուղղությամբ առաջարկությունների մշակումը,

5.10 գիտության ինքնաֆինանսավորման աղբյուրների ձեռքբերումը:

VI. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

6.1 Կենտրոնն ունի ներքոհիշյալ կառուցվածքը՝

6.1.1 Կենտրոնի ղեկավար,

6.1.2 Կենտրոնի աշխատանքների համակարգող,

6.1.3 Կենտրոնի ռեֆերենտ,

6.1.4 գիտական հետազոտությունների և հետբուհական մասնագիտական կրթության ստորաբաժանումներ:

6.2 Կենտրոնի կառավարումը

6.2.1 Կենտրոնի գիտական հետազոտությունների ստորաբաժանումը կառավարում է համալսարանի գիտահետազոտական աշխատանքները և նորամուծական ծրագրերը,

6.2.2 Կենտրոնի հետբուհական մասնագիտական կրթության ստորաբաժանումը կառավարում է ասպիրանտուրան.

6.2.3 Կենտրոնի ինչպես հետբուհական մասնագիտական կրթության, այնպես էլ գիտական հետազոտությունների ստորաբաժանումների ղեկավարները հաշվետու են Կենտրոնի ղեկավարին:

VII. Կենտրոնի ղեկավարը

7.1 Կենտրոնի ղեկավարին պաշտոնի նշանակում և ազատում է համալսարանի ռեկտորը՝ գիտխորհրդի առաջարկությամբ.

7.2 Կենտրոնի ղեկավարը պարտավոր է՝

7.2.1 ղեկավարել և վերահսկել կենտրոնի ստորաբաժանումների աշխատանքները,

7.2.2 ստեղծել ռազմավարական ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույցեր,

7.2.3 կազմել որակի ապահովման գծով տեղեկատվության բարձրացման սեմինարների, կլոր սեղանների ծրագրեր,

7.2.4 կազմակերպել և իրականացնել հետբուհական կրթություն և գիտահետազոտական գործառույթներ,

7.3 Կենտրոնի ղեկավարը պատասխանատու է կենտրոնի աշխատանքների որակի և նրա առջև դրված խնդիրների ու գործառույթների կատարման համար.

7.4 Կենտրոնի ղեկավարը Կենտրոնի աշխատանքների համար հաշվետու է համալսարանի գիտխորհրդին.

7.5 Կենտրոնի ղեկավարի բացակայության կամ հաստիքը թափուր մնալու դեպքում նրան փոխարինում է կենտրոնի առավել փորձառու խորհրդատուներից մեկը:

VIII. Եզրափակիչ մաս

8.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Հյուսիսային համալսարանի
գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի
և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն

«30» հոկտեմբերի 2014թ.